ԱՆՀԱՊԱՂ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
Քիմբերլի Քլարկ, Քաղաքապետարանի քարտուղար
Քաղաքապետարանի քարտուղարի գրասենյակ
(818) 238-5851
cityclerks@burbankca.gov

ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԲԱՑՎՈՒՄ Է ԲԸՐԲԱՆՔ ՔԱՂԱՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԸՐԲԱՆՔ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ (8 հուլիսի, 2024 թ.) – Բըրբանք քաղաքը հայտարարում է 2024 թվականի Բըրբանք քաղաքի ընդհանուր մունիցիպալ ընտրությունների թեկնածության առաջադրման շրջանի բացումը, որը համախմբված է Լոս Անջելեսի վարչաշրջանի հետ և նախատեսվում է անցկացնել 2024 թվականի նոյեմբերի 5-ին, որը կզբաղեցնի քաղաքային խորհրդի անդամի երկու (2) պաշտոնները չորս տարի լրիվ ժամկետով մինչև 2028 թվականի դեկտեմբերի 18-ը:

Քաղաքի ընտրովի պաշտոնների թեկնածուների համար պահանջները հետևյալն են. Միացյալ Նահանգների քաղաքացի, առնվազն 18 տարեկան, Բըրբանք քաղաքի բնակիչ՝ թեկնածության առաջադրման փաստաթղթերը ներկայացնելուց առնվազն 29 օր առաջ, և Բըրբենք քաղաքում գրանցված ընտրող՝ թեկնածության առաջադրման պահին: Որակավորվող անձինք կարող են կապվել քաղաքապետարանի քարտուղարի գրասենյակի հետ (818) 238-5851 հեռախոսահամարով, աշխատանքային սովորական ժամերին երկուշաբթիից ուրբաթ առավոտյան ժամը 8:00-ից մինչև 5:00 ընկած ժամանակահատվածում: **Թեկնածության առաջադրման շրջանը բացվում է 2024 թվականի հուլիսի 15-ին, երկուշաբթի, ժամը 8:00-ին, և փակվում է 2024 թվականի օգոստոսի 9-ին՝ ուրբաթ օրը, ժամը 5:00-ին:**

Եթե պաշտոնավարող անձը մինչև այս վերջնաժամկետը չներկայացնի դիմումը, ապա ժամկետը կերկարաձգվի մինչև 2024 թվականի օգոստոսի 14-ը՝ չորեքշաբթի, ժամը 5:00 այլ թեկնածուների համար, բացառությամբ այդ տեղի համար պաշտոնավարող անձի:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Քաղաքապետարանի քարտուղարի գրասենյակ՝
City Hall, 275 East Olive Ave., First Floor, Burbank, CA 91502
(818) 238-5851 կամ cityclerks@burbankca.gov

BurbankCityClerk @Burbankclerk www.burbankca.gov/elections